բուսաղէմ էր ընդ Իշխանութեամբ Օսմանցւոց (1770)։ Ալի Պէկ Եգիպտոսի եկն բազմութեամբ զօրաց 'ի Պաղեստին, եհաս առ նա յօգնութիւն Շէյխ Դահա Օմար յԱքքէ քաղաքէ, և պատերազմեալ առին զԳազա և զՌեմլէ եւ զԼիւդիա։ կողոպտեցին զվանօրայս և 'ի սուր հանին զվանականս ընդ քրիստոնէից։ Եւ ապա եկեալ պաշարեցին զքաղաքն Յոպպէացւոց, որ և տեւեաց ամիսս 7, և անկաւ սով 'ի քաղաքին՝ եւ բազումք 'ի բնակչաց մեռան, և 'ի նահանգէն Երուսաղէմի գաղտնի տանէին զպաշար և կերակուր 'ի բանակն։ և 'ի սաստկանալ սովուն՝ բազումք մեռան 'ի գիւղականաց և 'ի քաղաքէն։ Ալի Պէկ սաստկացոյց զպատերազմն Յոպպէ քաղաքի անընդհատ զաւուրս 5։ 'ի պարտութիւն մատնեցան Յոպպէացիք, և արկեալ թաշկինակս 'ի պարանոցս իւրեանց չոքան և անկան յոտս Ալի Պէկին, և նա յաղթանակաւ եմուտ 'ի ներքս, և յաւարն առեալ կողոպտեաց զվանօրայս երից ազգաց (1772 'ի 6 Փետրվար ամսոյ)։ Իսկ Պօղոս Պատրիարք 'ի կարօտութեան և 'ի նուազութեան ժամանակի կերակրեաց զուխտաւորս և զՀայ ազգի ժողովուրդն Երուսաղէմի, նաեւ զաղքատս և զկարօտեալս։ Ի սմին ժամանակի նստաւ Փաշա յԵրուսաղէմ, զի յառաջագոյն Միւսէլիմ էր։ Եղեւ հաշտութիւն Ռուսաց ընդ Օսմանցիս (1773։ Յունիս)։ բայց ծովն դեռ պաշարեալ էր, ուստի ոչ կարաց գալ նաւ ուխտաւորաց։

Աւանդէ նաեւ 'ի յիշատակարանս ձեռագիր Մատենից Կոստանդինուպօլսեցի Սարկաւագ Գալուստ՝ որ եկեալ էր յուխտ յԵրուսաղէմ, եւ ականատես լեալ գործոց Ապու Տահապի։ Եգիպտացի Ապու Տահապն յարձակեցաւ 'ի վերայ Յոպպէյու 1775։ 97 Մայիսի յաւուր տօնի Երեւման Ս։ Խաչի, և մտեալ 'ի քաղաքն 'ի սուր մաշեաց զբնակիչս նորա և ապա դիմեաց 'ի վերայ երից վանօրէից անդ՝ Հայոց, Յունաց և Լատինաց, և առհասարակ սուր եդեալ կոտորեաց զմիաբանս և զկրօնաւորս և զայլս զորս եգիտ անդ, և մերկացուցեալ զվանօրայս եւ անտի։ Աւանդութիւն է ծերունեաց քաղաքին, թէ Մինաս վարդապետ Հայոց 'ի պատարագելն գլխատեցաւ առաջի Սեղանոյն՝ ուր զՍեղանն կործանեցին, և տեսուչն թէպէտեւ էջ 'ի ջրհորն՝ այլ ոչ զերծաւ 'ի մահուանէ՝ զի անդ հարեալ սպանին զնա։ Եւ